



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11/19

Հայերէն լեզու

ԳՐԱՄԱՍԻՆ

ՔԱՐԹԵՊԱԷ

արհայ եւ չափաբերական

ԱՇԽԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԱԵՐԵԲ
844

1856


116057

12011

844 ւշ

891.99 4282-41
77-29

էրցաւ և չափած
աշխարհացանկ
մի 4-179 7/8 807.
vii 4 189 13/1



ԱՐՉԱԿ ԵՒ ՉԱՓԱՐԵՐԱԿԱՆ

Ա շ խ ա տ ու թ ի լ ն ն ե ռ ը :

Մի՛ տար Դու մեզ, ո՛վ Ստուած,
Ի ձեռս սնմիս դատողաց:
Արիւով:

Ս Պ Ի ՈՒ Բ Գ

Ա. Փրեդրիկսոնի տրպարանումը.

1856.



(Ինչան որդեական սիրոյ Վ. քահանայից Պատկանեան)

Այն ո՛վ է կանգնած ամբիոնի վրայ,
Գողգոթուն ձեռքերը երկինք ամբարձած,
Գրթառատ աչերը լի արտասուներով,
Բազմութեան ուշկը դէպի նա դարձած.
Որին ամենը Հայր են անուանում,
Ծանօթ, անծանօթ — հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրբօրի գաղանփերը նորա են յայտնում:

—Քահանայ է նա, քառող մեղքերու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխնջ Քրիստոսի հօտին,
Երկնաձիր դանձին նա է արթուն դէտ:

Երբ մենք թաթախուած Ազանց մեղօք՝
Եկանք սյա աշխար լըցեալ ցաւերով՝
Ո՛վ սրբեց, մաքրեց մեր հին մեղքերը,
Ո՛վ մեզ ըստփեց իւր սուրբ խօսքերով:
Վամ երբ ժանտախտած, ընկած մահճումը՝
Սըրտատանջ, անոցս մահ էինք խընդրում
Պանդխտի նրման ամենից թողած՝
Ո՛վ մեզ ստաջին հասաւ օգնութիւն:
Վամ երբ մոլորուած գառերու նրման
Վոյր վազում էինք դէպի խորխորատ,



844-2011
h. f. 838

(4252)
41

Ո՛վ, արդեօք, այն օր փրօղից մեզ մահաց,
Գիւական գրքէն հանեց անարատ.

Կամ երբ մեղալիք աչքերը բռնաւ
Չե՛նք համարձակում երկինք ամառնալ,
Որին ենք կանչում միջնորդ հաշտութեան,

Ունի՛լ յոյս ունինք թողութիւն ստանալ:
Եւ կամ ըզբաղած ունայն գործերով՝
Մոռցել ենք Աստուած, կրօն, սուրբ հաւատ,
Ո՛վ է մեր սեղը մեր մեղաց համար
Արտասունք թափում աչքէն յորդառատ:

—Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սրբրոզ, յանցանաց քաւիչ:

Ե՛կ պատուենք, եղբարք, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորա մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդւոց վերայ
Պատրաստ է հրակել անքուն աչքերով.
Եւ բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
Չուզաց փառք, պատիւ, գթօսանք աշխարհի.
Քանց սուրբ քահանան էլ ո՛վ կարող է
Արդեօք մեզ համար լինել հայր բարի:

ՂԶմարիտ բարեկամ

(Բարոյական առակ)

Մի վաճառական ունէր որդի, որին աչքի լուսի պէս սիրում էր: Լա-
կրթութիւն տուեց նորան ու մի օգտաւէտ բան չի թողեց, որ չի սոր-
վեցնի նորան, որով կարող է բացուիլ մարդուս խելքը ու միտքը:

Երբ-որ տղան մեծացաւ՝ հայրը ուզեց, որ ճանապարհորդութիւն
անէ: «Որդեակ, ասաց մի օր, լա՛ւ խնայիր, որ լաւ բարեկամը աշխար-
քիս ամեն գանձից թանկագինն է: Մարդուս բոլոր ժամանակաւոր հարս-
տութիւնը ու գանձը փոփոխական է. այս-օր կայ՝ վաղը չի կայ. բայց
հաւատարիմ բարեկամին միայն մահը կարող է խրվել մեր ձեռից. թէ
որ դու մի այդպիսին գրանես քեզ համար՝ իմացի՛ր որ էլ ուրիշ մի բանի
կարօտութիւն չես ունենայ: Ուրեմն, սիրական, իմ ցանկութիւնը այն
է, որ դու ճանապարհորդութիւն անես: Ղանապարհորդութեան ժա-
մանակ մենք փորձով սովորում ենք մարդ ճանաչել: Քանի-որ նոցա
հետ աւել նըստենք վեր-կենանք՝ այնքան աւել կրտուրենք ինչպէս պէտք
է նոցա հետ վարուել: Աշխարհըս որ կայ՝ մի մեծ գիրք է. ով-որ նո-
րա կարգալ դիտէ՝ շատ շահաւէտ բաներ կրտուրի մէջից: Գրե՛մ, որ-
դի, ամենից աւել աշխատի՛ր խիական բարեկամ գրանել, ու այդպիսի
մարդու համար պէտք եղած ժամանակը հոգիդ-էլ մի՛ խնայել:»

Երիտասարդը մընաս-բարով արտա հօրը ու դընաց օտար աշխարհ:
Հատ չի մընաց այնտեղ. մին-էլ տեսնես՝ շուտով տուն դարձաւ: Օար-
մացած մընաց տեղումը հայրը, որ որդին այդպէս շուտ ետ-դարձաւ:

—Ի՞նչ հրամայել էիր, ասաց որդին հօրը, բարեկամ ճարել. ես
հիմի իմ ծանօթներուս մէջ հիսուն այնպիսիներու վրայ կարող եմ մա-
տով ցոյց-տալ, որոնք բարեկամութեան օրինակ կարող են լինել:—

«Որդեակ, ասաց հայրը, մի՛ անարգիլ այդպէս բարեկամութեան սրբ-
բաղան անունը. չի փորձած մի՛ գովիր բարեկամներուդ: Իմացի՛ր, որ
բարեկամութիւնը հազուադէպ է: Հատերը կան, որ սուս բարեկամ
են մեզ ձեռանում: Նոցա համար քեզ պէս դիւրահաւան մարդը այն
է, ինչ-որ արբեցողի համար գինիով շիշն է. քանի-որ մէջը գինի կայ
ձեռից բաց չի՛ թողնում: Տէնց-որ գինին սրբաւ՝ խիղճն դէն է շարբ-
տում: Չլինի թէ քու բարեկամներն-էլ այդպէսներկեց լինին:»

—Հայր, ասաց որդին, քու կարծիքը, քու կասկածանքը անհիմն են:
Որոնց-որ ես բարեկամ եմ համարում՝ տարարազդութեան մէջ-էլ լի-

նիմ' (հաւատարի եմ') ինձ անօգնական չե'ն թողնիլ:—

«Աթոթանատուն տարի աշխարհա երեսին կեցել եմ, ասաց հայրը, չար ու բարի շատ անցել են գրլլսիցըս. շատ ծանօթներ ունեցել եմ: բայց այսչափ ժամանակուայ ու այսքան ծանօթներուս մէջ միայն մի հատ բարեկամ կարողացել եմ գրանել: Ինչպէս պատահեցաւ, որ դու այդ մատաղ հասակիդ և կարճ ժամանակուայ մէջ հիտուն հատը գըտար: Հիմի դու մրտիկ-արա՛ ինչպէս պէտք է մարդ ճանաչել:»

Իսկայն հրամայեց, որ մի ոչխար մորթեն, դընեն պարկի մէջ ու արդի վրան գըտար արիւնաթաթախ անեն: Հէնց-որ մրթացաւ՝ ոչխարով պարկը դըրեց որդու շարակը. մի քանի խրատներ սուեց նորա՝ որ ինչ ու ինչ պիտի անէ, ու միասին դուրս-գնացին: Արիտատասարդը գընաց իր բարեկամներից մինի դուռը խրտեց: Բարեկամը բացեց դուռը. կրեսանց ուրախութեամբ ներս հրամեցէք արաւ, ու հարցուց գալու պատճառը: Վաճառականի որդին ասաց. — Բարեկամները այն ժամանակ կարող են հաւատացնել, որ մեզ սիրում են, երբ-որ անբաղդութեան ժամանակ չի թողնեն մեզ: Միտըդ է, որ ես քեզ պատմում էի, որ մեր գերդաստունը մեր հարեւանի հետ անբաւականութիւն ունի: Տարբաղտարար մի անբընակ փողոցի մէջ պատահեցայ նորա հետ: Թուրը ձեռին վրաս վազեց և ուզում էր սպանել ինձ. ես պաշտպանուել ուզելով ակամայ սպանեցի նորա: Հիմի վախենում եմ որ մարդասպանութիւնը չի յայտնուի ու ինձ չի բռնեն. այդ պատճառաւ մեռելին սյստեղ բերի: Հատ կաղաչեմ, ա՛ն, պահէ՛ տանըդ մէջ, մինչեւ-որ աղմուկը փոքր ինչ հանդարտուի:»

Կեղծաւոր բարեկամը պատասխան տուեց. «Տուերս այնքան փոքր է որ մէջը կենդանիի համար-էլ տեղ չի կայ, ո՛ւր մընաց որ մեռելին: Չեր տարաձայնութիւնը ձեր հարեւանի հետ քաղաքի մէջ ամենին յայտնի է. ուստի ամենըն-էլ կասկածի կըգան՝ արդեօք դու մեռցրած «չլինիս նորան: Արևկըսն մեռածի մարմինը ամեն-տեղ պըտըրտել ուրով-հետեւ մեր բարեկամութիւնըն-էլ ամենին յայտնի է՝ իմ տունըս-էլ «կըգան: Դու-էլ տեսնում ես, որ խընդրիներդ կատարելով քեզ շատ շահ չեմ անիլ. բայց ինքըս փորձանքի մէջ կ'ընկնիմ: Այդ-էլ քեզ բաւական է, որ գաղանիքըդ թաղուն կըպահեմ:»

Հատ աղաչեց պաղատեց նորա երիտասարդը, բայց ՚ի զուր. վերջապէս տեսաւ, որ նորա համոզելու հընար չի կայ՝ գընաց միւս բարեկամների մօտ, որոնց վրայ աւել յոյս ունէր, բայց ամենըն-էլ առաջ ինի

պէս ընդունեցին:

«Հիմի հաւատացի՛ր, ասաց հայրը, որ ամեն մարդու վերայ յոյս դընել չէ կարելի: Ո՛ւր է բարեկամներիդ հաւատարմութիւնը, որոնց քեզ համար քարէ պատեր կարծում էիր: Հիմի դու տե՛ս՝ ինչ տարբերութիւն կայ իմ և քու բարեկամների մէջ: Խօսելով խօսելով եկաւ իրա բարեկամի տուն. պատմեց նորա իր գլլսի փորձանքը: Բարեկամը խիստ ուրախացաւ, որ նորա իր սէրը յայտնելու դիպուած գըտաւ: «Տատ ամենայնի յուսա՛ վրաս, ասաց նորա. կըսեստես, որ ես քու մըտերիմ՝ բարեկամն եմ: Գլուխըս փորձանքի տակ-էլ ձըգելու լինիմ՝ մեռելը տանըս կըպահեմ: դուք գընացէ՛ք իմ գեղը ու սյն-տեղ խաղաղ ապրեցէ՛ք, ու մի բանից-էլ մի՛ վախենաք, մինչև որ ամեն բան հանդարտուի:»

Վաճառականը շնորհակալ եղաւ բարեկամից նորա մեծահոգութեանը համար. տեղն ՚ի տեղ պատմեց, որ այդ նա գիտութեամբ արաւ, որ ցոյց տայ որդուն, թէ ինչպէս պէտք է մըտերիմ՝ բարեկամը կեծաւորից զանաղանել:

Քառփուշ քա

Դուն մի՛ վախնալ, Քառփուշ քա
Ինչ խելքի բան բըռնելուդ,
Մեր մահչլան-ալ մէկ կուգայ
Տօնախմբութեան օրըդ.

Ակունները պօռի պէս,
Աչքերն-ալ հիլունի,
Կերպը նըկարածի պէս,
Ծանը՝ տախ պիւլպիւլի:

Նայէ՛ ինչ հարկինք կուտամ,
Ինչպէս կըլամ բողբաւոր,
Թէ իմ Օվանէս-Աղան
Բլայ մեղ յօժարաւոր.

Մենք կըվայելինք աստեղ,
Օարմանք կըլանք ամենին,
Սուրբ-Խաչալ կերթանք մէկտեղ
Օստիկ Կանանչ-Կիրակին:

Արթըրխ ինձ ինչ հարս կուգայ
Հէ՛մ զարգարված, հէ՛մ սիրուն,
Ճերմըկութեան պէս չիկայ
Հիչ մէկ կամը շարմաղուն.

Կըտակըս ծուռ, հալաւըս նոր,
Պայըս կըտրիճի կերպով,
Թէ հարցնուն՝ աս վո՛վ է որ.
Փուռունճի Ա... ով:

Դամասկոսի Հայ աղջիկ

Ինչ կարծիք էլ ունեցած լինէի Ասորուց գեղեցկութեան վրայ, ինչ գաղափարներ էլ թողած լինէին իմ գլխումըս Հոռոմի և Աթէնքի կանանց գեղեցկութիւնը՝ Հայոց կանանց և աղջկերանց գեղեցկութիւնը ամենին գերազանցեց. գրեթէ ամեն-տեղ այնպիսի կերպարանքներ տեսայ, որ Աւրուպացուց վրձինը դեռ ևս չի նկարել. աչքեր՝ այնպիսի ճագագայթածիգ աչքեր, որոնց նրմանը մինչև այն օր ո՛չ մի կրեկայ վրայ տեսած չէի. այնպիսի նուրբ և հրաշալի ուղիղ դրժեր, որ ամենաթէթեւ և ամենաքնքրոյշ ձեռք նորա նրման չէ՛ կարող նկարել. այնպիսի թափանցիկ կաշի և միեւնոյն ժամանակ՝ այնպիսի կենդանի գոյներով ներկած որ՝ մինչև վարդի թերթերը անգամ՝ նորա առաջ դրժոյն կարող են երեւել: Առամները, ժրպիտը, մարմնոց փափկութիւնը, նոցա շարժմունքը, ձայնի արծաթեայ սարդ հրնչիւնը՝ բոլորը միասին առած՝ հաւասարակշիռ են այս զարմանահրաշ երեւոյթի մէջ: Նոցա զբոյցը գեղեցիկ և շնորհաշուք է, և ամօթխածութիւնը առանց ամաչկոտութեան. ասես թէ՛ նոքա արգէն սովորել են այն զարմացմանը, որ շարժում են ուրիշների սրտումը: Արկար ժամանակ սրահանում են նոքա իրանց գեղեցկութիւնը խողաղ և հանդիպո թնակութեան մէջ, ուր մնաւ չունի այն ամօթալի կիրքը, որ փաստւում է և՛ հոգին և՛ մարմինը: Գերզատաններու մէջ այնքան գեղեցիկ է մայրը, որքան և նոցա դուստրը, թէև վերջինը շատ անգամ տասնրկեց տարեկան է լինում: Հայոց աղջկուհիք սովորաբար տասներկու կամ տասներեք տարեկան հարմանում են (ք մարդի են գրնում): Այս կանանց զգեստը խիստ ճոխ և շքեղ է, որոնց վրայ մենք արեւմտացիքըս պիտի զարմանայինք: Սագերը ծաղիկներու հետ խառն հիւսած՝ շատ պրտոյտներ անելով ճակատի շուրջը՝ գանգուրներով ընկնում են փղոսկեայ մարգարտաշար ուսերու վրայ: . . . Չէի կարող դաձնել աչքերըս հրապուրիչ կանանց վրայից. մեր այցելութիւնը և մեր խօսակցութիւնը գրեթէ առաւել և առաւել շարունակվում էր: Հայոց կանայք և աղջկուհիք որքան գեղեցիկ են, այնքան էլ հաճելի: Սեր խօսակցութեան նիւթը արեւմտքի կանանց զգեստներու և սովորութիւններու վրայ էր: Հայոց կրնանիք ամենեւին

չեն նախանձում մեր կանանց վիճակին, և ունին իրաւունք. եթէ մեր կանայք էլ ունենային նոցա խօսակցութեան և շարժմանց շնորքը, նոցա բարութիւնը, նոցա բացարտութիւնը, սրտի և հոգւոյ պարզութիւնը, յիրաւի՛ որ աւել բան չէին ցանկանալ, որ գերզատանի մէջ երջանիկ լինէին: Հայոց կնանիք ժամանակ առ ժամանակ մին մինի այցելութիւն են անում. նոյն պէս անկարելի է ասել, որ նոքա արանց ժողովից բաժանուած լինին. բայց այդ ժողովը բաղկացած է լինում մի քանի դեռահաս բարեկամներէ կամ աղգականներէ, որոնց մէջից արդէն ընտրում են փեսայ կամ նըշանած՝ տեսներով երիտասարդի կամ օրիորդի միմիանց հակամիտութիւնը և ընտանեկան դրութիւնը: Այդ նըշանածներն էլ ժամանակ առ ժամանակ խառնըլում են հարազատ զուակներու պէս ընտանեկան ուրախութեանց մէջ: Դամասկոսին (Ղանապարհորութիւն յԱրևելս.)



Բաժակ փրկութեան:

ԱՅա՛ մըթնեց արեւմուտքը Հրէաստանի աշխարհին,
 Պայծառ օրը տեղի տուեց երեկոյան խաւարին.
 Արեգական վերջի լուսով դեռ կրփայլէր վառի վառ
 Գրկած պատած այգիներով Այլճոնին սուրբ կատար,

Յերուսալէմ—փառք Տընութեան՝ լերանց վերայ հանգչում էր,
 Կարկաչելով Յորդանանը ափերի մէջ թաղչում էր.
 Մեռեալ ծովը քրնաթաթախ աչերն 'ի վեր ամբարձած՝
 Համարում էր անթիւ աստղեր՝ երկնից տեսքին զմայլած:

Մութը իջաւ . . . տարածեցաւ գերեզմանի լըռութիւն,
 Ծագեց լուսինն ու լոյս-տուեց Գեթսեմանի սյգերուն:
 Չիթնիի ծառերու տակ՝ հողի վերայ տարածած
 Երեք հոգի խոր քրնելեն՝ դարան ու հոգսը մտայցած:

Բայց ուրիշ քուն կաշկանդել էր համայն ազգին մարդկութիւն:
 Խըրուած թաղուած մինչ ի կոկորդ ճահիճի մէջ մոլութիւն:
 Միայն Մինի սուրբ աչերից քունը հեռի էր փախչում,
 Ո՛չ խայթ խղճի, ո՛չ աշխարհնք նորա հոգին էր տանջում:

Նա անմեղ էր՝ մոլութեանն նա միշտ մընաց անհաղորդ,
 Լոկ մարդկուն համար թափեց այն-օր արցունք աչքից յորդ
 Մահագուշակ սարսուռ ընկաւ նորա տրկար մարմինին,
 Երբ փրկութեան մարդկան ազգի բաժակ տեսաւ ստաջին:

«Հա՛յր, գոչեց նա, վիշտը հոգին իմ՝ ճընշում է չարաչար,
 «Քանի-որ՝ դամ, սրտակ ու փուշ աչքես անցնում են շար շար.
 «Կուգայ ժամը (Նս սյգ դիտեմ), դատը կլինի ողջակէզ
 «Չի տըրտընջալ իւր վիճակէն, կը խոնարհէ գլուխը հէջ:

«Միակ Որդիդ պիտի մեռնի, որ սոց մարդկան ազատէ,
 «Մեզո՛հ մարդը նորա գլխին հայհոյանքներ կը թափէ,
 «Հա՛յր, Հա՛յր ինձնից թող հեռանայ այս բաժակը դառնութեանց,
 «Որոնց համար ես պիտ' մեռնիմ՝ բնաւ չաժեն փրկութեան.
 «Բայց թէ Որդուդ դառն մահը ազգիդ կըրտայ նոր մի կեանք,
 «Նոցա անթիւ մեղաց համար լիցի՛ արիւնն իմ փրկանք:»

Ար ս. ք ս ի ա ր տ ա ս ու ւ ն ք ը
 (Նուէր Պ. Քանանեանին.)

Սայր-Արաքսի ափերով
 Քայլամոլոր գընում եմ,
 Հին, հին դարուց յիշատակ
 Աչեաց մէջը սըլարում եմ:

Բայց նորա միշտ յեղյեղուկ.
 Պըղտոր ջըրով եղերքին
 Դարիւ դարիւ խրքիերով՝
 Փախչում էին լալադին:

— Երա՛սխ, ինչո՛ւ ձկանց հեա
 Խաղ չես բըռնում մանկական,
 Դու դեռ ծովը չի հասած՝
 Արգաւոր ես ինձ նըման:

Ինչո՛ւ արցունք ցայտում են
 Քու սեգ, հըպարտ աչերից,
 Ինչո՛ւ արագ փախչում ես
 Այդ հարազատ ափերից:

Մի՛ սըղտորիլ յատակըդ,
 Հանգարտ հոսէ՛ խայտալով, —
 Մանկութիւնը քու կարճ է
 Շուտ կը հասնիս դէպի ծով:

Վարդի թըլիեր թո՛ղ բընին
 Քու հիւրընկալ ափի մօտ,
 Սոխակները նոցա մէջ
 Երգեն մինչեւ սոսուտ:

Սըշտաղալար ուսինք
 Սառ ծոցի մէջ քու ջըրին

Նըկուն սասըն ու տերեւ
Թո՛ղ թաց անեն տապ օրին :

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գա՛ն համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Զուրը մըտնին միշտ արձակ :—

Մէջքը ուռցուց Արաքսը ,
Փրփուր հանեց իր տակից ,
Սմալի նրման գոռարով՝
Լսալէս խօսեց յատակից .

«Խիղճ՛ա անմի՛տ պատանի ,
«Ներհըա ինչո՛ւ գարեւոր
«Վրդովում՛ես , նորոգում
«Իմ ցաւերը բիւբաւօր :

«Արեւի մահից յետ
«Ե՛րբ ես տեսել , որ այրին
«Ոտից գըլուխ պըճնուի
«Ի՞ր զարգերով թանկագին :

«Որի՛ համար զարգարուիմ ,
«Որի՛ աչքը հրապուրեմ՝—
«Հատերն ինձ են տակի ,
«Հատերին՝ - ես օտար եմ՝...

«Կար ժամանակ , որ ես-էլ
«Շքեղազարդ հարսի պէս
«Հազար ու բիւր սըղամերով
«Փաշում էի ամերէս .

«Յատակըս սարդ ու վճիտ ,
«Կոհակներըս ուրբուն ,
«Ի ուսարերը մինչեւ այդ
«Զըբիս միջին էր լողում :



«Ի՛նչ քս մընաց էն օրից ,
«Ո՛ր ջըրամօս գեղերըս ,
«Ո՛րը իմ շէն քաղաքից ,
«Ո՛ր բերկրալի տեղերըս :

«Տուրքը ջըրի ամեն օր
«Ի՞ր սուրբ ծոցէն Արարատ
«Սայրախընամ՝ ինձ սընունդ
«Պարգեւում է լիաբատ .

«Գայց ես էն սուրբ ջըրերով
«Սուրբ-Սկօբի աղբիւրին
«Պիտի ցողեմ՝ արտորա՛ք
«Իմ ասելի օտարին :

«Կամ՝ կենսատու իմ ջըրով
«Ափերիս մօտ կըկըգած՝
«Ե՛ր նամա՛ղը կատարէ
«Թուրք կամ Պարսիկը հոտած

«Սինչ իմ որդիք , (ո՛վ գիտէ)
«Ծարաւ , նօթի , անտերունչ
«Օտար աշխար յածում՛են
«Թոյլ ոտքերով կիսաշունչ :

«Հեռո՛ւ հեռո՛ւ քըշեցին
«Բընիկ աղգըն իմ հայկեան ,
«Նոցա տեղը ինձ տուին
«Ազգ անկը բօն , մոյսկան

«Դոցա՛ համար զարգարեմ՝
«Իմ հիւրընկալ ամերը ,
«Եւ կամ՝ դոցա՛ հրապուրեմ
«Շրպոտս , սըլշած աչերը :

«Բանի-որ իմ զաւակունք
«Լսալէս կու՛մընան սանդուխտ

«Ինձ միշտ սրբւոր կրտսնէք.
«Ե՛ս է անխար իմ սուրբ ուխտ»

Եւ չիխուսեց Արարքը.
Յորձանք տուեց ահագին,
Օղակ օղակ օձի պէս
Առաջ-սողաց մոլեգին:



Ի տարածամիկ մահ Մատթէոս մանկան (Ը. . . ևան):

ՏՄՊՍԼԱԳԻՐ

Հաղա՛ր երանի քեղ, մանուկ ամբիժ,
Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
Ուր վաղուց ՚ի վեր ունի բնակութիւն
Անմեղութեան հետ մոլի չարութիւն.
Բայց այն ո՛վ գիտէ՛ քեղ ի՛նչ էր սպասում
Փրշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում.
Միթէ՛ յաւիտեան՝ պիտի մինացիր
Հանգիստ գրքի մէջ քու մօր սիրալիբ,
Կամ՝ թէ՛ յաւիտեան՝ քեղ պիտի ժրպտար
Գարնան վարդի հետ այս օտար աշխար:

Արդարագատութիւն

Պէտք է խոստովանել (ասում է մէկ Փրանսիացի ճանապարհորդ), որ
Թուրքի մեծամեծքը շատ անգամ խելոք և սրղար են դատում: Երբ-որ
գործը կամ վէճը ծանրակշիռ է նորա մտանում են իրանց բընածին կապ-

տութիւնը, թողնում են անձնային վրէժխընդրութիւնը, (որ նոցա օրէն-
քով արդեւած չէ՛) և անաչառ դատուոր են լինում: Յետագայ անցքը, որ
գուցէ շատ մարդու յայտնի չէ՛ կարող է ասածիս սպացոյց լինել:

Մեծ Վէլիբի որդին սիրահարվում է մի դեռահաս և գեղեցիկ Հայ
կնոջ վրայ, որ քիչ ժամանակ առաջ պըսակուած է եղել մի Հայի հետ:
Վէլիբի որդին բոլոր կարողութիւնը ՚ի դործ-գնում է, որ իր ցանկու-
թեանը հասնէ, իր գայթակղացնէ Հայ կընկանը. բայց նորա աշխատուի-
րունայն են լինում, և նա՛ փոխանակ սիրտը հանդարտեցնելու՝ ևս առաւել
ջերմացնում է, և այդ բոպէից հաստատ միտքը-դընում է բըռնութեամբ
հասնել նըպատակին: Երբ-որ նորափեսան իմանում է այն փորձանքը, որ
իր սիրականի գլխին է հաւարուած և տեսնում է որ միայն իր չարակա-
մի մահը կարող է ազատել երկուսին այդ վերահաս խայտառակութիւնից
խօսք-մէկ է լինում կընկաց հետ և սպանում է Վէլիբի որդուն: Որպէս
զի հեռացնէ իրանից ամենայն կասկածը՝ ուշի-ուշով թաղցնում է ան-
չնչացած մարմինը:

Մինը չիկարողանալով տանել խղճմտանքի չարչարանքը՝ դընում է Քա-
թօլիկի Պատրիի մօտ (որով-հետև ինքն-էլ քաթօլիկ է եղել) և մտեր-
մաբար յայտնում է նորա իրանց կատարած յանցանքը: Բայց դարձելի
մարդը երբ-որ իմանում է այս ծանրակըշիռ գաղտնիքը՝ ըսկըսում է իս-
պառնալ խղճին ասելով որ՝ թէ՛ չէս տալ ինձ այսքան գուճար, իսկոյն
կըյայտնեմ Վէլիբին: Բայց դորանով-էլ չի բաւականանում, — ըսկըսում
է անպատկառ առաջարկութիւններ անել. բայց անօգուտ: Մինը մեծ-
անձնութեամբ պատասխան է տալի նորա. «Վըռութեանը համար կա-
րողացայ քեղ փողով վարձադրել, բայց անպարկեշտութեամբ՝ — ո՛չ»:

Երբ-որ Վէլիբը ըսկըսում է անհանգըստանալ որդու ուշանալու մասին,
իսկոյն հրամայում է հրապարակական մանետիկներին ամեն տեղ յայտ-
նել, որ մեծ պարգև խոստանում է այն մարդուն, որ նորա որդիից մի
լուր կըբերէ: Սրժաթամոլ Պատրին լաւ դիպուած է համարում այս
իր սըբտի վրէժը հանելու համար. դալիս է հանդիսանում է Վէլիբի
առաջ և առանց խղճմըտանքի մասնում է տարարաղդ ամուսիններուն:
Վէլիբը հրամայում է երկուսին-էլ իրա մօտ կանչել և ամեն բան ման-
րամասնաբար հարցնում է: Մորա ո՛չ մի բան չեն թաղցընում և ճըշմա-
րիտը խոստովանում են՝ քաջ իմանալով, որ պիտի մահի դատապարտուին:
Որդեկորոյս հայրը դեռ ևս վըճիոր չի տուած՝ ուղարկում է Հայոց
Պատրիարքի մօտ մի պատգամաւոր և հարցնում է նորա թէ՛ ի՛նչ պատ-

ժոյ արժանի է երդմնագրանց և ուխտադրուժ քահանան: Պատրիարքը
 իւր մերձակոյ մեծամեծաց հետ միաբան պատասխանում է թէ՛ սյդպիսի
 քահանան արժանի է կրրակի վերայ սյրվելու: Վէջ իւրը չի ուշանում կա
 տարել այդ արդարացի վըճիւրը: Յետոյ կանչում է տարարազդ ամու-
 սիններին և արտասուելով ասում է նոցա. «Քէ և ես մեռածի հայրն էի,
 բայց կողմնասահ չեղայ. որդիս մեղաւոր էր (խօսք չիկայ) ուրեմին ես
 պէտք է որ ձեզ ներեմ:» Հրամայում է գանձապետին տալ կրնոջը այնքան
 փող, որ հաւասարուի այն գումարին, որ աչքածակ Պատրին ստացել
 էր նոցանից:

Այս անգրը պատճառ է լինում, այդ գերդաստունին հեռանալ այն
 եկեղեցիէն, որի գործակատարք ամուսնական վիճակէ զրկուած՝ իրանց
 չար կրթօք պատճառ են լինում հարիւրաւոր ընտանիներէ տարարազ-
 դու թեանը:

Տալ և բարեգործել.

Այլ է տալը, ա՛յլ է բարեգործելը: Ով-որ տալիս է առանց խրատա-
 նաց՝ չիմանալով ո՛ւմ կամ ինչո՛ւ, նա արժանի է, որ նորան մարդիկ
 անձնասէր անուանեն. այդ ստատաձեռնութիւն չէ՛, այլ սընսարծութիւն:
 Կորա կ'ասեն բարեգործ, որ առաջ հոգս է անում իրա սեպհական ըն-
 տանիներու վրայ. իսկ աւելորդը խոհեմութեամբ և զգտիւ բաժանում է
 կարօտեալներուն: Բարեգործ մարդը աչքի առաջ հողարաւոր դիպուած-
 ներ ունի բարերարելու: Ահա՛ քեզ ամենալաւ միջոցներ, որով կարող ես
 ուրիշներին շահել և քեզ զուարճութիւն պատճառել. պատանիներուն
 կրթութիւն տո՛ւր, ջանասերներուն խրատուսէ՛, ծերերին հանգրտացո՛ւր
 ցաւազարներին թեթեւացո՛ւր և որբերին հովանաւոր՛:



4252
41



Երես շրմա կանն թույլեր :



№ 1. Գրա փու փա .

№ 2. Արարիս արամս ու Նրր .

Al

Musical notation for the first system, including treble and bass staves with notes, rests, and dynamic markings like 'p'.

Fin

Musical notation for the second system, including treble and bass staves with notes, rests, and dynamic markings like 'f'.

Musical notation for the third system, including treble and bass staves with notes, rests, and dynamic markings like 'p'.



№ 2.

Fin

Musical notation for the fourth system, including treble and bass staves with notes, rests, and dynamic markings like 'p'.

Musical notation for the fifth system, including treble and bass staves with notes, rests, and dynamic markings like 'p' and 'diminuendo'.

Musical notation for the sixth system, including treble and bass staves with notes, rests, and dynamic markings like 'p'.



Handwritten mark or signature at the bottom right corner.